ՀՍՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 12/1

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Ապառաժ» ՍՊԸ և «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ ՀԳ-ի միջև 2024թ. փետրվարի 12-ին կնքված N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/6 ծածկագրով «ՀՀ Սյունիքի մարզի ք. Կապանի թիվ 6 հիմնական դպրոցի կառուցման» աշխատանքների պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «18» 06 **2026 թ.**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի տնօրեն **Սարգիս Բաղինյանի,** ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Ապառաժ» ՍՊԸ և «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ ՀԳ**-ն, ի դեմս **«Ապառաժ» ՍՊԸ**-ի տնօրեն **Դավիթ Ավետիսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, և **«Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ**-ի տնօրեն **Գառնիկ Ներսիսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 12.02.2024թ. կնքված **«ՀՀ Սյունիքի մարզի ք. Կապանի թիվ 6 հիմնական դպրոցի կառուցման»** աշխատանքների կատարման թիվ **N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/6** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) **8.5-րդ** կետի դրույթները՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագիրը լրացնել նոր՝ Հավելված թիվ 6-ով՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելվածի:
2. Պայմանագրի «3.1 **Պատվիրատուն իրավունք ունի**» ենթաբաժինը լրացնել նոր **3.1.19, 3.1.10 և 3.1.11** կետերով հետևյալ բովանդակությամբ.

   «3.1.9 Անհապաղ կասեցնել շինարարական աշխատանքները կամ դրանց մի մասը, եթե արձանագրված խախտումը (այդ թվում՝ Հավելված 6-ով սահմանված) վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքին, առողջությանը կամ շրջակա միջավայրին:

   3.1.10 Սույն կետի հիմքով աշխատանքների կասեցման ամբողջ ժամանակահատվածը չի հանդիսանում շինարարության կատարման

ժամկետների երկարաձգման հիմք, և այդ ընթացքում առաջացած բոլոր լրացուցիչ ծախսերն ու վնասները կրում է բացառապես Կապալառուն:

3.1.11 Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն, առանց դատարան դիմելու, լուծել պայմանագիրը, եթե առկա է հետևյալ իրավիճակներից որևէ մեկը.

- Կապալառուի նկատմամբ սույն Պայմանագրով և Հավելված 6-ով սահմանված կարգով 2 (երկու) անգամից ավելի կիրառվել է տուգանք (կամ նախազգուշացում)՝ անկախ տուգանքի նմանատիպությունից, կրկնակիությունից, միաժամանակյա առկայությունից կամ բացակայությունից, տուգանքի կիրառումը որևէ եղանակով վիճարկելիս լինելու կամ չլինելու հանգամանքից և այլ ցանկացած իրավիճակից:
- Կապալառուն տուգանքի կամ խախտման մասին ծանուցմամբ սահմանված ժամկետում չի վերացրել խախտումը և/կամ դրա հետևանքով կիրառված կրկնապատիկ տուգանքից հետո էլ ծանուցմամբ սահմանված ողջամիտ ժամկետում շարունակել է անգործությունը (խախտումը չվերացնելը):
- Կապալառուն թույլ է տվել այնպիսի խախտում, որն առաջացրել է կամ կարող էր առաջացնել մարդկային զոհեր, խոշոր նյութական վնաս կամ բնապահպանական աղետ:
- Կապալառուն չի ենթարկվել Պատվիրատուի կամ Տեխնիկական հսկողի՝ աշխատանքների կասեցման վերաբերյալ հրահանգին և շարունակել է շինարարական աշխատանքները:»:

3. Պայմանագրի «3.4 **Կապալառուն պարտավոր է**» ենթաբաժինը լրացնել նոր **3.4.13, 3.4.14 և 3.4.15** կետերով հետևյալ բովանդակությամբ.

«3.4.13 Շինարարական աշխատանքների մեկնարկից մինչև դրանց ավարտն ու Պատվիրատուի կողմից ընդունումը պահպանել սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 6-ով սահմանված բոլոր նորմերն ու կանոնները:

3.4.14 Շինարարության կազմակերպման, անվտանգության տեխնիկայի և բնապահպանական նորմերի խախտման հետևանքով երրորդ անձանց (ներառյալ անցորդներին, հարակից գույքի սեփականատերերին) պատճառված ցանկացած գույքային, նյութական կամ ֆիզիկական (առողջությանը պատճառված) վնասի համար կրել ամբողջական պատասխանատվություն:

3.4.15 Պատվիրատուի առաջին պահանջով, ամբողջությամբ փոխհատուցել Պատվիրատուի նկատմամբ վարչական մարմինների կողմից նշանակված այն

վարչական տույժերի ու տուգանքների և պատժամիջոցների գումարները, որոնք առաջացել են Կապալառուի մեղքով կամ վերջինիս կողմից նորմերի խախտման հետևանքով:»:

4. Պայմանագրի 8-րդ «ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բաժնի 8.12 կետի երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն պայմանագրի N 1, N 2, N 2.1, N 3, N 4, N 4.1, N 5, N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:»:
5. Պայմանագրի 6.5.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ՝ Հավելված 6-ով սահմանված կարգով, կիրառվում են նախատեսված պատասխանատվության միջոցները:»:
6. Պայմանագրի 8-րդ «ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բաժինը լրացնել 8.16 և 8.17 կետերով հետևյալ բովանդակությամբ՝

   «8.16 Սույն պայմանագրի շրջանակներում տրվող բոլոր ծանուցումները Պատվիրատուի կողմից ուղարկվում են էլեկտրոնային եղանակով՝ Կապալառուի հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեով՝ g.hambardzumyan44@mail.ru:

   8.17 Էլեկտրոնային փոստով ուղարկված ծանուցումը համարվում է պատշաճ հանձնված Կապալառուին այն ուղարկելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից:»:
7. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

8. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, և դրա դրույթները տարածվում են Կողմերի միջև Պայմանագրի կնքման պահից ի վեր ծագած հարաբերությունների նկատմամբ:
9. Համաձայնագիրը կազմված է 10 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 3 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	**«Ապառաժ» ՍՊԸ**	**«Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0071, Նուբարաշենի խճ.17/1	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 001, Թումանյան փող., 9/46
ՀՎՀՀ՝ 00846441	ՀՎՀՀ՝ 00440378	ՀՎՀՀ՝ 09419634
Հ/հ՝ 900011051829	Հ/հ՝ 15700-04636690100	Հ/հ՝ 15700-11766900100
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ	Բանկ՝ « Ամերիաբանկ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝	Տնօրեն	Տնօրեն
Ա. Բաղինյան	**Գ. Նալբանդյան**	**Գ. Ներսիսյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված

12.02.2024թ.

ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/6 ծածկագրով

աշխատանքների գնման պայմանագրի

« 18 » 06 2026թ.

կնքված Համաձայնագիր

«Հավելված 6

12.02.2024թ. կնքված

ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/6 ծածկագրով պայմանագրի

1. Խախտումներ և պատասխանատվության միջոցներ

Հ/Հ	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Կապալառուն չի կազմակերպել օբյեկտի նախապատրաստումը, այդ թվում՝ ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից նախագծային փաստաթղթերի (ներառյալ գոյություն ունեցող օբյեկտի վերակառուցման դեպքում կոնստրուկցիաների տեխնիկական հետազննության արդյունքների) ուսումնասիրություն, շինարարության պայմաններին մանրազնին ծանոթություն, արտահրապարակային ու ներհրապարակային նախապատրաստական աշխատանքներ՝ հաշվի չառնելով շրջակա միջավայրի անվտանգության պահանջները:	1. Նախազգուշացումից հետո խախտումը չվերացնելու կամ նույն խախտումը կրկնվելու դեպքում Կապալառուի նկատմամբ կիրառվում է միանվագ տուգանք՝ տվյալ բյուջետային տարում հատկացված գումարի (կնքված համաձայնագրերի կամ Պայմանագրի) ընդհանուր արժեքի 0.5%-ի (զրո ամբողջ հինգ տասնորդական տոկոս) չափով: 2. Տուգանքի կիրառումից հետո ծանուցմամբ սահմանված ողջամիտ ժամկետում արձանագրված խախտումը Կապալառուի կողմից չվերացվելու կամ նույն խախտումը դարձյալ կրկնվելու դեպքում, վերջինիս նկատմամբ կիրառվում է տուգանք՝ խախտման համար սահմանված հիմնական պատասխանատվության միջոցի (տուգանքի) կրկնապատիկի չափով:
2	Հատուկ, կարևորագույն և եզակի օբյեկտների շինարարության նախապատրաստումը չի ընդգրկել անհրաժեշտ երկրաշարժաչափական, ջրաերկրաբանական, ջրաբանական, երկրաքիմիական, երկրաբաշխական, մարկշեյդերյան, օդերևութաբանական, լարումաչափական և այլ դիտարկումների կազմակերպումը, փորձարարական հարթակների կամ չափողական կայանքների ստեղծումը: Հետազոտական աշխատանքները կամ փորձարկումները չեն իրականացվել ՊՕՀ-ին և ՊՊՐ-ին համապատասխան, կամ ՊՊՐ-ն չի համաձայնեցվել պատվիրատուի և նախագծային կազմակերպության հետ:	
3	Շինարարական հրապարակը սահմանված կարգով չի ցանկապատվել (պահպանական, պաշտպանական կամ ազդանշանային	

	սարքերի կիրառմամբ), չի ստեղծվել երկրաբաշխական նշահարման հիմք, չեն կառուցվել մոտեցման ճանապարհներ, պահեստային տնտեսություն կամ ՊՕՀ-ով նախատեսված ժամանակավոր ինժեներական ենթակառուցվածքներ (ջուր, կոյուղի, էլեկտրականություն, գազ):	
4	Շինհրապարակի ցանկապատի կամ տեսանելի տեղամասում չի տեղադրվել հատուկ վահանակ՝ պատվիրատուի և կապալառուի տվյալներով, ծրագրի անվանմամբ, ժամկետներով, թույլտվությունների պատճեններով և (պետական միջոցների դեպքում) նախահաշվային արժեքի վերաբերյալ տեղեկատվությամբ, կամ այն չի պահպանվել մինչև շինարարության ավարտը:	
5	Ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի համար չեն նախատեսվել կենցաղային սպասարկման անհրաժեշտ շինություններ (սանհանգույց, բուժկետ, աշխատանքային և հանգստի սենքեր և այլն):	
6	Չի մշակվել կամ չի պահպանվել շինանյութերի, կոնստրուկցիաների և սարքավորումների մատակարարման ենթակառուցվածքների և մեքենա-մեխանիզմների տեղաբաշխման սխեման, խախտվել է շահագործման և մատակարարման ժամանակացույցը՝ ըստ ՊՕՀ-ի և ՊՊՐ-ի:	
7	Գոյություն ունեցող կառուցապատման պայմաններում աշխատանքներն իրականացվել են հարակից օբյեկտների կենսապահովման համակարգերի (էլեկտրա-, գազա-, ջրամատակարարում, կապ, կոյուղի) կամ ճանապարհների ու մայթերի անվտանգ շահագործման խաթարմամբ՝ հակասելով ՊՕՀ-ի պահանջներին:	
8	Ազատ տարածքներում կամ հողային աշխատանքների հատվածներում չի իրականացվել բուսական գրունտի հանում, տեղափոխում կամ թմբապատում, կամ չի ապահովվել ժամանակավոր մակերեսային ջրահեռացումը արհեստական կառուցվածքների միջոցով:	
9	Կանաչապատ տարածքներում չի իրականացվել պահպանման ենթակա տնկիների, ծառերի կամ բուսական գրունտի առանձնացում, կամ չի կատարվել ծառերի և թփերի անհրաժեշտ տեղափոխումը այլ տարածքներ:	

10	Շինարարության տարածքում չի իրականացվել բուսական ծածկույթի բների հանում, մաքրում, կամ պահպանման ոչ ենթակա բուսական շերտի ու արմատների հեռացում:	
11	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա կանաչ տնկիները չեն ցանկապատվել (ցանցապատվել), առանձին կանգնած ծառերի բները չեն պաշտպանվել ատաղձափայտով, կամ պիտանի տնկիները չեն վերատնկվել հատուկ պահպանական գոտում:	
12	Իրականացվել է բուսականության հատում կամ աճող ծառերի բների հողալցում այն դեպքերում, որոնք նախատեսված չեն եղել նախագծային փաստաթղթերով:	
13	Անձնակազմի համար չեն ստեղծվել անվտանգ ու սանիտարահիգիենիկ պայմաններ, չեն տրամադրվել անհատական պաշտպանական միջոցներ (արտահագուստ, սաղավարտ, կոշիկ), կամ տեխնիկական հսկողի կողմից չի կատարվել անվտանգության տեխնիկայի հրահանգավորում:	
14	Չի լրացվել աշխատանքների վարման մատյանը, չեն կազմվել ծածկված աշխատանքների փաստագրման, կոնստրուկցիաների ընդունման կամ փորձարկման ակտերը և այլ անհրաժեշտ կատարողական փաստաթղթերը:	
15	Խախտվել են օդի փոշոտվածության և գազոտվածության կանխարգելման պահանջները (բացակայում է անթափանց թաղանթը, չի կատարվում ջրում, սորուն նյութերը պահվում են բաց տարածքում, մեքենաների անվադողերը չեն լվացվում կամ բեռները չեն ծածկվում հատուկ պաստառով):	
16	Աշխատանքների ավարտից հետո չեն վերականգնվել/կառուցվել հարակից մայթերը, փողոցները, չի իրականացվել բուսական գրունտի փռում, ծառերի տնկում կամ սիզամարգերի ցանում և դրանց խնամքի ապահովում՝ նախագծին համապատասխան:	
17	Չի ապահովվել շինարարական աղբի տեղափոխումը հատկացված վայրեր սահմանված երթուղով՝ համայնքի կողմից տրված պայմանների խախտմամբ:	
18	Բարեկարգման տարրերի և միջոցառումների ընտրության ժամանակ հաշվի չեն առնվել աշխարհագրական դիրքի, կլիմայական պայմանների և միկրոկլիմայի պահանջները, ինչպես նաև կլիմայի փոփոխության	

	կանխարգելիչ միջոցառումները:	
19	70.0 մլն դրամը գերազանցող ծրագրերի դեպքում շինհրապարակը ողջ ընթացքում համալրված չի եղել տեսախցիկներով:	
20	Շինարարության կազմակերպման ժամանակ չեն պահպանվել հաստատված նախագծային փաստաթղթերի, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի, N 718-Ն որոշման և սույն կետում նշված այլ իրավական ակտերի ու ՀՀՇՆ-ների պահանջները:	

2. **Խախտումների արձանագրման կարգը.**

Յուրաքանչյուր խախտում արձանագրվում է Պատվիրատուի կամ Տեխնիկական հսկողի կողմից կազմված երկկողմ կամ եռակողմ ակտով, կամ շինարարության վարման մատյանում համապատասխան գրառում կատարելով:

Եթե Կապալառուն (կամ նրա լիազոր ներկայացուցիչը) հրաժարվում կամ խուսափում է ակտը ստորագրելուց, ապա ակտը կազմվում և ստորագրվում է միակողմանի՝ Պատվիրատուի կամ Տեխնիկական հսկողի կողմից, ինչի մասին ակտում կատարվում է նշում ստորագրելուց հրաժարվելու/խուսափելու մասին:

Միակողմանի ակտին կցվում են խախտումը հիմնավորող լուսանկարներ, տեսանյութեր կամ փաստը հավաստող այլ ապացույցներ, որոնք հանդիսանում են տուգանքի հաշվարկման, նշանակման և գանձման անվերապահ ու բավարար հիմք:

3. Պատասխանատվության միջոցները կիրառման հաջորդականությունը.

Սույն Հավելվածով նախատեսված խախտումների համար պատասխանատվության միջոցները կիրառվում են հետևյալ հաջորդականությամբ.

Առաջին անգամ արձանագրվելիս. Կապալառուին տրվում է գրավոր նախազգուշացում և սահմանվում է խախտման վերացման ողջամիտ ժամկետ:

Նախազգուշացումից հետո խախտումը չվերացնելու կամ նույն խախտումը կրկնվելու դեպքում Կապալառուի նկատմամբ կիրառվում է միանվագ տուգանք՝ տվյալ բյուջետային տարում հատկացված գումարի (կնքված համաձայնագրերի կամ Պայմանագրի) ընդհանուր արժեքի 0.5%-ի (զրո ամբողջ հինգ տասնորդական տոկոս) չափով:

Տուգանքի կիրառումից հետո ծանուցմամբ սահմանված ողջամիտ ժամկետում արձանագրված խախտումը Կապալառուի կողմից չվերացվելու կամ նույն խախտումը դարձյալ կրկնվելու դեպքում, վերջինիս նկատմամբ կիրառվում է տուգանք՝ տվյալ խախտման համար սույն Հավելվածով սահմանված հիմնական պատասխանատվության միջոցի (տուգանքի) կրկնապատիկի չափով:

3. Անվտանգության տեխնիկային, աշխատանքի պաշտպանությանը և շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող խախտումները ենթակա են վերացման անհապաղ, սակայն ոչ ուշ, քան արձանագրման պահից 24 ժամվա ընթացքում:

4. Պատվիրատուն, ելնելով խախտման բնույթից, իր հայեցողությամբ կարող է ծանուցմամբ սահմանել նշված ժամկետից տարբերվող այլ ժամկետ:
5. Խախտումը վերացնելուց հետո, հետագայում նույնատիպ խախտման նոր դեպք արձանագրվելիս, այն համարվում է հերթական (նոր) խախտում և առաջացնում է նոր միանվագ պատասխանատվություն (տուգանք): Խախտումը համարվում է նույնը, նույնատիպ և/կամ համանման, եթե այն նախատեսված է Հավելված 1-ի աղյուսակի միևնույն տողով՝ անկախ դրսևորման ժամանակից, վայրից, ծավալից, գնից (արժեքից) կամ որևէ այլ հատկանիշից:
6. Կապալառուն պարտավորվում է յուրաքանչյուր խախտման դեպքի համար վճարել սույն Հավելվածով սահմանված չափով միանվագ տուգանք: Տուգանքը հաշվարկվում և գանձվում է Պատվիրատուի կողմից ուղարկված գրավոր ծանուցման հիման վրա, ինչպես նաև հաշվանցվում է Կապալառուին վճարվող գումարների հետ:
7. Այն դեպքում, երբ վճարվելիք գումարը բավարար չէ տուգանքը մարելու համար, Պատվիրատուն իրավունք ունի գանձումն իրականացնել Պայմանագրի կատարման ապահովման երաշխիքից կամ օրենքով սահմանված այլ եղանակով:
8. Տուգանքի վճարումը Կապալառուին չի ազատում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումից և թույլ տրված խախտումների վերացման պարտականությունից:
9. Էլեկտրոնային փոստով ուղարկված ծանուցումը համարվում է պատշաճ հանձնված Կապալառուին այն ուղարկելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից, և խախտումը վերացնելու կամ տուգանքը վճարելու ժամկետների հաշվարկը սկսվում է այդ պահից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	**«Ապառաժ» ՍՊԸ**	**«Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0071, Նուբարաշենի խճ.17/1	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 001, Թումանյան փող., 9/46
ՀՎՀՀ՝ 00846441	ՀՎՀՀ՝ 00440378	ՀՎՀՀ՝ 09419634
Հ/հ՝ 900011051829	Հ/հ՝ 15700-04636690100	Հ/հ՝ 15700-11766900100
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ	Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն Ա. Բաղինյան /ստորագրություն/	Տնօրեն Ռ. Ավետիսյան /ստորագրություն/	Տնօրեն Գ.Ղազարյան /ստորագրություն/

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **«ՀՀ Սյունիքի մարզի ք. Կապանի թիվ 6 հիմնական դպրոցի կառուցման»** աշխատանքների նպատակով կազմակերպված **№ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/6** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **12.02.2024 թ.** կնքված **№ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/6** պայմանագրում 18.06.2026 թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ կողմերի հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝	Պայմանագրի կետի և նոր հավելվածի ավելացման հիմքի առկայություն
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագրի կետի և նոր հավելվածի ավելացում
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 8.5 կետը

Պատվիրատու՝Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

ОБЪЯВЛЕНИЕ
об изменениях, внесенных в заключенный договор

Армянский фонд территориального развития ниже представляет краткую информацию об изменениях, внесенных 18.06.2026 года в договор **№ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/6** заключенный **12.02.2024 года** в результате процедуры закупки под кодом **№ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/6** организованной с целью приобретения Строительные работы для своих нужд и копия утвержденного сторонами документа, в котором содержится внесенное изменение.

Причина возникновения изменения:	Наличие основания для добавления нового пункта и приложения к договору
Описание изменения:	Добавление нового пункта и приложения к договору
Обоснование изменения:	Пункт 8.5 договора

Заказчик: Армянский фонд территориального развития